

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ին: «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԱՇՏԱՐԱՐԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Սարգսյան
 Հասցե՝ 0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 26/1 փող., «Էրեբունի պլազա»
 քիզնես
 կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ
 Հեռ.՝ (010) 58-23-21, 58-23-22, Ֆաքս՝ (010) 58-24-21
 Էլ. փոստի՝ info@fsm.am կայք՝ www.fsm.am



Միրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ դեմ կայացված որոշումները:



Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ -ի միջև վեճերը, սակայն կարող է «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ -ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ -ն խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական

Հասցե՝ 0010, ք.Երևան, Վ.Մարգարյան փող. 6
 Հեռ.՝ (010) 59-26-97
 Էլ. հասցե՝ chairman@cba.am
 Ֆաքս՝ (010) 56-54-96
 կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ -ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք գրկվում եք «Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: